

տայ և ցումբուրուք վեռանականության հոգածող շահմատի տիժը
— ձևագործության ցումբուրուքներ ու մամուճուրուքներ սերույ
մասնակիության ամենամեծ և բարեկարգապատճեն մասն այլ այլ այլ

Miniatures Arméniennes. vies du Christ, peintures ornementales (X-e au XVII-e siècle), 68 planches en phototypie, et 8 figures dans le texte explicatif, par Fr. Macler, Paris, Paul Geuthner, 13, rue Jacob, 40 fr.

Սոյն ընդարձակ վերսագրի մէջ արդէն բաւարար չափով
զաղափար արուած է գործի բովանդակութեան մասին: Հարկաւոր
է միայն տալ մի քանի բացուցիչ բացադրութիւններ, որպէս զի
ընթերցողի համար աւելի ևս պարզուի այն նշանակութիւնը, որ
վիճակուած է Պ. Մակլերի սոյն հրատարակութեան:

Զհաշուելով այն զարդերն ու զարդագրերը, որոնք, թուով
8, գրուած են ֆրանսերէն բացադրութեանց մէջ, իւրաքանչիւր
գլխի սկզբում, պատկերների թիւն է 192 հաշուելով և այն զար-
դերը, որոնք կետեզուած են վերջին էջում: Սրանցից ամենաէա-
կանները, որոնք նշանակութիւն ունին մանաւանդ մանրանկար-
չութեան համեմատական ուսումնասիրութեան տեսակէտից, նրանք
են, որ վերաբերում են Քրիստոսի մարդկութեան ու կեանքին,
վերցրած մեծ մասամբ աւետարանական պատմութիւններից, մա-
սամբ էլ եկեղեցական աւանդութիւններից: Այս կարգի պատկեր-
ների թիւն համուռմ է մօտ 160-ի, լուսանկարուած հետեւեալ ձե-
ռագրերից—էջմ. Գէորգիան Յուց. 362, Ղենն. Միւ. 697, 986,
Փարիզի Bibl. Nationale, 18. 21, ասոր. 344 (ըստ ասորական ձե-
ռագրաց ցուցակի), Փար. մատենագ. Ecole des Langues Orient. viv.,
Պ. Մոռգանի (մասնաւոր անհատ), Բոլոնիայի համալսարանի մատ.
3290, և Խոջուջեանի (մասնաւոր անհատ): Մի պարզ ակնարկէ
բաւական է համոզուելու, որ այս բոլոր իրարից տեղով ու ժա-
մանակով հեռու, ձեռագրերում պատկերները բխում են միենոյն
ազրիքից: Ուշագրաւ է մանաւանդ Փարիզի Bibl. Nat. ի ասոր.
344 ձեռագրերը (աւելի ճիշտը՝ ալբոմը, որովհետև ձեռագրում
տեկստ բնաւ չկայ), որի մէջ իւրաքանչիւր պատկերում կան բա-
ցադրական վերտառութիւններ նայեցին ու ասորերէն լեզուներով:
Ըստ Պ. Մակլերի ասորերէնն յետոյ է աւելացրած, մինչ հաւա-
նական են երկու պարագաներն էլ. սակայն եթէ ասորականը լինի
սկզբնական, այդ գէպքում պատկերների իրար հետ ունիցած աղ-
գակցութեան սահմանը աւելի կ'ընդարձակուի և համեմատութեան
համար նոր եղբեր կը հայթայթէ, թող որ պատկերների մի մասը
գոյութիւն ունի և բիւզանդական աւետարաններում: Աւելի ևս

ուշագրաւեն և ջմիածնի ՅԵՒ-ի պատկերները, որոնք եթէ արուեստի կողմից թոյլ են և անձաշակ, առեղջադրութեան ահօնակէտից այնքան բնորոշ, որ ոչ մի, կամ գրեթէ ոչ մի, նմանութիւն չեն ներկայացնում միւսների հետ: Այս վերջինների մէջ նախ չորս աւետարանիչները միասին են նկարուած և ոչ առանձին առանձին: Այս միենոյն բանը տեսնում ենք նաև Մայր Աթոռի ուրիշ հին աւետարաններում, որոնք ի նկատի չեն առնուած ներկայ գործի մէջ. երկրորդ՝ շատ անգամ միենոյն պատկերում տեսնում ենք երկու տարբեր անցքեր՝ մերթ մի գծով բաժանուած, մերթ առանց որ և է բաժանման, օր. նկ. 17—Գարբելի ողջոյնը Մարիամին և Մարիամի այցը Եղիսաբեթին (առանց որ և է բաժանման), նկ. 19. Ընծայութիւն ի տաճարն և Մկրտութիւն Յորդանանուում (առանց բաժանման). նկ. 20. Այլակերպութիւն և Ղազարոսի յարութիւնը (առաջինն առաջինը առած մի բարակ շրջանակի մէջ). նկ. 24. Քրիստոս խաչի վրայ և խաչից ցած բերութիւնը (առանց բաժանման). նկ. 25. Քրիստոս դրուում է գերեզմանի մէջ և յարուցեալ Քրիստոս գծոխքից հանուած է Աղամին ու Եւային (ուրիշ նկարներում Քրիստոս այդ անուած է նախ քան յարութիւնը)—դաբճալ առանց բաժանման: և երրորդ՝ նկ. 22. Տերունական ընթրիք, ուր գառան տեղ տեսնում ենք ձուկ: Այս վերջին պարագան ենթադրել է տալիս, որ սոյն նկարների եթէ ոչ ծագման, գէթ զարգացման որրանը արելելըն է. հմ. R. Pischel. Leben und Lehre des Buddha, էջ 19. և . . Սիմվոլներն ևս, ինչպէս ձուկն իրեւ քրիստոնէութեան սիմվոլ, հաւանորէն Հնդկաստանից են մուծուած քրիստոնէութեան մէջ ասորիների միջոցավ:

Հեղինակը գործի սկզբում ինքնին խոսափանուամ է, որ մանրանկարների ուսումնասիրութիւնը իր մասնագիտութեան չի վերաբերում, այդ պատճառով և չէր կարելի պահանջնել, որ նա ի նկատի ունեցած լինէր և ուրիշ ձեռագրեր միենոյն հարցի համար Սա աւելի բիւզանդակիտութեան է վերաբերում, որի ներկայացուցիչները, վստահ եմ, շնորհակալ են լինելու Պ. Մակերից և այսրանի համար:

Սոյն աւերունական—եթէ կարելի է այսպէս անուանել— նկարներից անբաժան պէտք է համարել և քսանի չափ խորաններ՝ վերցրած միենոյն ձեռագիր աւետարաններից, այդ այն խորաններն են, որոնք, որպէս ցանկ, պատկերացնում են չորս աւետարանների իրար համապատասխան գլուխները: Սրանք ևս թէ ասուածարանսական և թէ արուեստի տեսակէտից կարևոր նշանակութիւն ունին: Թերևս աւելորդ չինի դիտութեան համար յիշատակել այստեղ, որ Մայր Աթոռի № 175/349 ձեռագրում (Նահապէտ կաթողիկոսի Աստուածաշունչ) միենոյն խորանները, նկա-

բուած ամեն մէկը առանձին գոյներով, կրում են ստորև կարեռը ծանօթութիւններ գոյների նշանակութեան մասին, ինչ որ էական է հայ մանրանկարչութեան հոգերանական կողմը լուսաբանելու համար:

Պ. Մակերի հաւաքածոյում զետեղուած պատկերների մէջ իրանց բովանդակութեամբ առանձնապէս աչքի են ընկնում հետևեալ երեքը—նկ. 177 «Հայ եկեղեցու եօթը խորհուրդները», նկ. 178 «Երկրաւոր Դրախտ»—Փար. Bibl. Nat. 140, և նկ. 181 «Եերսէս Լամբրոնացու ներշնչուելը Յիսուսից»,—Փար. Bibl. Nat. 32. Սրանցից առաջին երկուան հաւանօրէն ընդօրինակութիւն են լատինական ձեռագրերից (երկրորդի համար հեղինակն ինքն է յիշատակում), որ ընդօրինակուած է Բոլոնիացի Բարթելեմի նկարչի զործերից), իսկ երրորդը նկարուած հետեղութեամբ լատինականի: Սրանց ժամանակը ժիշտ զարն է և ինչպէս բովանդակութեան այնպէս և արուեստի ու նրբութեան կողմից պակաս հետաքրքրական չեն:

Պ. Մակերը գովելի հետամառութեամբ հրատարակել է նաև մի քանի ձեռագրերի արծաթապատ նրբաքանդակ կողքեր, որոնց ուսումնասիրութիւնը դեռ չէ էլ սկսուած ոչ եւրոպայում և ոչ մեր մէջ, թէև արդէն ուշադրութեան առնուած է մեր մեղուածան միաբանակից ։ Գարենդին վարդապետի կողմից:

Դալով այս մի քանի մանր զարդերին, որոնք նոյնպէս տեղ են գտած սոյն զործի մէջ, արդարեկետաքարքարական են և այսօր էլ կարող են ճաշակի օրինակ ծառայել, բայց մենք թուում է թէ ընդօրինակութիւնը, մանաւանդ գործի սկզբում զետեղուածների մէջ, տեղի է ունեցած մեծացրած դիրքով, որով իսկականի քնքշութիւնը չի մնացել:

Եզրակացութիւն. Պ. Մակերը չինելով հանդերձ մասնագէտ՝ հրատարակել է մի ամփոփ և օգտաշատ աշխատութիւն թէ բիւղանդագիտութեան և թէ հայ արուեստի համար, թէև, չմոռանանք աւելացնել, այդ աշխատութիւնը գնահատելի է ոչ թէ իբրև մի զիտական գործ, այլ իբրև մի նոր և հում նիւթ, մանաւանդ եւրոպայում: Դրախտաբար զնի թանգութիւնը—40 ֆր. շատ քշերին մատչելի պիտի դարձնէ սոյն գործը:

Մ. Փարդ. Մախութեանց.